


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հոկտեմբերին /վերլուծություն/


2003թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 7435 գործարքներ, որոնք 2002թ. հոկտեմբերի համեմատ նվազել են 13.4%-ով, իսկ 2003թ սեպտեմբերի համեմատ՝ աճել են 11.2%-ով:

2003թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3293 օտարման գործարքների 89.3%-ը կազմել են առուվաճառքները, 9.9%-ը՝ նվիրատվությունները եւ 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

46.2%-ն արձանագրվել են Երեւան քաղաքում, իսկ 48.3%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. հոկտեմբերին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 0.3%-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել է 12.6%-ով: 2003թ. հոկտեմբերին Երեւան քաղաքում անշարժ գույքի 1307 առուվաճառքի գործարքների 69.8%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երեւանում, 2003թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.4%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ նվազել է 17.5%-ով:

2003թ. հոկտեմբերին Երեւան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները՝

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. հոկտեմբերին համարժեք է 564.0 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն եւ առավելագույն գները 2003թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հոկտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2002թ.
Կենտրոն	250.0-970.0	402.1	396.1	303.0
Արաբկիր	200.0-560.0	302.8	300.5	199.0
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	193.1	186.4	130.0
Նոր-Նորք	115.0-250.0	150.6	147.1	109.5
Ավան	120.0-190.0	150.1	146.2	94.6
Էրեբունի	120.0-300.0	159.5	156.1	117.0
Շենգավիթ	120.0-250.0	162.4	157.4	110.2
Դավթաշեն	130.0-260.0	191.7	185.2	105.5
Աջափնյակ	120.0-250.0	167.5	162.2	109.0
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	157.5	152.1	104.0
Նուբարաշեն	65.0-100.0	70.1	69.0	49.5
Երևան	<b>65.0-970.0</b>	<b>191.6</b>	<b>187.1</b>	<b>130.1</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձեւավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երեւան քաղաքում 2003թ. հոկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, սեպտեմբերի համեմատ աճել են 2.4%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ 47.3%-ով:

2003թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երեւանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 456 բնակարաններ, որոնց քանակը սեպտեմբերի համեմատ նվազել է 0.2%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ 5.6%-ով:

2003թ. հոկտեմբերին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն եւ առավելագույն գները հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հոկտեմբեր 2003թ	սեպտեմբեր 2003թ	հոկտեմբեր 2002թ
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.7	62.6	59.5
	Ապարան	18.0-40.0	27.4	27.3	25.7
	Թային	18.0-40.0	25.2	25.2	22.4
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.7	54.6	52.5
	Մասիս	20.0-90.0	54.4	54.4	53.2
	Վեդի	20.0-45.0	31.7	31.7	29.0
	Արարատ	22.0-50.0	31.5	31.5	29.2
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.6	84.5	73.5
	Արմավիր	21.0-58.0	45.6	45.5	41.9
	Մեծամոր	17.0-50.0	30.9	30.9	29.6
Գեղարքունիք	Սեւան	20.0-50.0	30.7	30.6	29.7
	Գավառ	20.0-50.0	30.4	30.4	29.2
	Մարտունի	18.0-38.0	29.7	29.6	28.4
	Վարդենիս	10.0-21.0	17.3	17.3	16.4
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	61.0	60.9	59.0
	Ստեփանավան	20.0-48.0	33.3	33.2	29.1
	Սյիտակ	17.0-40.0	24.1	24.0	22.7
	Այվերդի	15.0-40.0	25.6	25.5	24.2
	Տաշիր	15.0-28.0	19.4	19.3	18.1
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	84.1	84.0	77.0
	Նոր Հաճն	35.0-75.0	52.3	52.3	50.3
	Բյուրեղավան	15.0-45.0	35.2	35.2	33.9
	Եղվարդ	28.0-55.0	40.7	40.7	38.6
	Հրազդան	18.0-55.0	30.9	30.8	28.6
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.8	75.8	72.2
	Չարենցավան	13.0-55.0	31.1	31.1	28.9
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.8	71.7	61.7
	Արթիկ	17.0-45.0	25.3	25.3	24.1
	Մարալիկ	15.0-33.0	23.7	23.7	21.0
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.7	29.7	27.5
	Կապան	18.0-52.0	29.3	29.3	25.9
	Սիսիան	17.0-37.0	27.6	27.6	26.0
	Մեղրի	18.0-40.0	25.2	25.2	22.5
	Քաջարան	13.0-30.0	18.5	18.5	16.7
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	35.3	31.2
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.9	46.9	45.3

	Ջերմուկ	18.0-50.0	41.2	41.2	37.8
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	36.2	32.3
	Իջևան	23.0-60.0	40.4	40.4	39.0
	Բերդ	15.0-43.0	29.3	29.3	27.1
	Նոյեմբերյան	21.0-45.0	26.8	26.8	25.0

2003թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները սեպտեմբերի համեմատ աճել են 0.1%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ 7.6%-ով:

2003թ. հոկտեմբերին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 463 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 98, մյուս մարզերում միասին վերցրած՝ 365: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 7.2%-ով, այդ թվում Երևան քաղաքում՝ նվազել է 27.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել է 23.3%-ով: 2003թ. սեպտեմբերի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.2%-ով, ընդ որում մյուս մարզերում միասին վերցրած՝ 17.0%-ով, իսկ Երևանում՝ նվազել է 15.5%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների վաճառքի եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները եւ նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ եւ տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն եւ առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ եւ տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հոկտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2002թ.
Կենտրոն	255.0-990.0	416.2	410.0	305.0
Արաբկիր	205.0-580.0	306.7	305.0	200.0
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	194.8	189.0	131.5
Նորք-Մարաշ	120.0-240.0	309.2	303.0	250.5
Ավան	125.0-200.0	150.9	147.0	113.0
Էրեբունի	130.0-320.0	160.4	157.0	117.0
Շենգավիթ	120.0-260.0	162.4	158.0	111.0
Դավթաշեն	140.0-260.0	192.5	186.0	108.5
Աջափնյակ	125.0-230.0	168.3	163.0	109.5
Մալաթիա-Մեքաստիա	125.0-250.0	157.4	153.0	114.0
Նուբարաշեն	65.0-110.0	73.1	72.0	53.0
Միջինը Երևանում	65.0-990.0	208.4	203.9	146.6

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձեւավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. հոկտեմբերին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները սեպտեմբերի համեմատ աճել են 2.2%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ 42.2%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների եւ ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձեւավորվել են հետևյալ շուկայական գները

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ եւ տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն եւ առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. հոկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ եւ տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հոկտեմբեր 2003թ.	սեպտեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.8	82.7	78.7
	Ապարան	20.0-55.0	38.8	38.8	35.5
	Թալին	15.0-40.0	28.1	28.1	24.9
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.9	61.8	59.5
	Մասիս	27.0-88.0	62.4	62.4	59.4
	Վեդի	25.0-60.0	36.3	36.3	34.6
	Արարատ	25.0-60.0	37.4	37.4	34.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.6	89.5	77.2
	Արմավիր	35.0-90.0	52.3	52.2	47.7
Գեղարքունիք	Սեւան	25.0-60.0	36.4	36.4	34.8
	Գավառ	25.0-65.0	39.9	39.9	37.6
	Մարտունի	20.0-55.0	33.9	33.9	31.9
	Վարդենիս	15.0-45.0	21.3	21.3	19.1
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.7	68.6	64.3
	Ստեփանավան	20.0-50.0	33.7	33.6	31.9
	Սպիտակ	17.0-50.0	24.1	24.1	23.6
	Ալավերդի	18.0-50.0	25.9	25.9	25.4
	Տաշիր	15.0-30.0	19.9	19.9	18.7
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	92.4	92.3	88.6
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.2	51.8
	Բյուրեղավան	15.0-50.0	38.2	38.2	35.8
	Եղվարդ	23.0-70.0	47.3	47.3	44.3
	Հրազդան	25.0-65.0	40.0	39.9	37.2
	Ծաղկաձոր	45.0-110.0	85.2	85.2	83.4
	Չարենցավան	25.0-50.0	33.4	33.4	32.0
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.9	90.8	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.7	28.7	25.8
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.9	22.5
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.6	31.6	30.0
	Կապան	25.0-55.0	31.1	31.1	28.5
	Սիսիան	18.0-50.0	28.7	28.7	26.7
	Մեղրի	18.0-40.0	28.2	28.2	23.7
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	17.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	37.0	37.0	34.2

	<b>Եղեգնաձոր</b>	20.0-65.0	49.2	49.2	46.8
	<b>Ջերմուկ</b>	25.0-60.0	43.3	43.2	40.4
<b>Տավուշ</b>	<b>Դիլիջան</b>	20.0-60.0	39.2	39.2	37.2
	<b>Իջևան</b>	30.0-70.0	41.2	41.2	39.5
	<b>Բերդ</b>	20.0-50.0	30.9	30.9	28.9
	<b>Նոյեմբերյան</b>	20.0-50.0	30.8	30.8	28.4

2003թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները սեպտեմբերի համեմատ աճել են 0.06%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ 6.8%-ով:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 682 գործարքներ /277.18 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 24.39 հա/: Հողի օտարման 377 գործարքներն /226.98 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 665-ը հանդիսացել են առուվաճառքի, 15-ը՝ նվիրատվության և 2-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 18 գործարքներում որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձինք:

2003թ. հոկտեմբերին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 17.3%-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ 25.5%-ով:

2003թ. հոկտեմբերին հողերի առուվաճառքներից 60-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 23-ը՝ /14.23 հա/ Երևանում, իսկ 37-ը՝ /8.21 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 16 միավորը /5.09 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 33-ը՝ /2.83 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 11-ը՝ /14.53 հա/ հասարակական կառուցապատման:

Ստորև ներկայացվում է 2003թ. հոկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

<b>ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>Պետական սեփականություն հանդիսացող</b>						<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0,00	27	4,19	15	15,27	0	0,00	52	3,16	3	1,41
Արագածոտն	10	3,70	0	0,00	0	0,00	47	27,99	17	1,97	0	0,00
Արարատ	0	0,00	0	0,00	2	0,23	99	29,87	33	2,75	0	0,00
Արմավիր	0	0,00	0	0,00	0	0,00	78	81,62	17	2,86	7	0,52
Գեղարքունիք	0	0,00	0	0,00	4	1,50	1	0,40	1	0,04	0	0,00
Լոռի	0	0,00	0	0,00	0	0,00	18	24,15	0	0,00	2	0,12
Կոտայք	6	1,39	12	1,20	0	0,00	81	35,19	78	6,93	4	3,11
Շիրակ	0	0,00	0	0,00	0	0,00	13	9,94	5	0,54	1	0,04
Սյունիք	0	0,00	0	0,00	0	0,00	4	3,73	0	0,00	0	0,00
Վայոց Ձոր	0	0,00	0	0,00	3	2,69	6	1,91	1	0,04	1	0,20
Տավուշ	0	0,00	0	0,00	3	0,04	9	5,26	2	0,14	0	0,00
<b>Ընդամենը</b>	<b>16</b>	<b>5,09</b>	<b>39</b>	<b>5,39</b>	<b>27</b>	<b>19,73</b>	<b>356</b>	<b>220,06</b>	<b>206</b>	<b>18,43</b>	<b>18</b>	<b>5,40</b>

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի, 665առուվաճառքի գործարքներ, որից 372-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 291-ը՝ բնակավայրերի, 2-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում վաճառվել են 2 միավոր /0.14 հա Կոտայքի մարզում/ արդյունաբերական օբյեկտների հողեր: 2003թ. հոկտեմբերին Երևանում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք:

2003թ. հոկտեմբերին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 372 գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 16, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	10	3.70	194.0	1940.0	890.0	34	12.97	840.0	7600.0	2370.0
Ապարան								130.0	1150.0	320.0
Թալին						12	12.37	200.0	1680.0	315.0
Ծաղկահովիտ						1	2.66	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						66	17.32	740.0	10000.0	1950.0
Մասիս						7	3.28	400.0	5600.0	1030.0
Վեդի						26	9.27	450.0	7200.0	1200.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						21	12.49	650.0	4650.0	1225.0
Բաղրամյան						24	52.03	130.0	1000.0	440.0
Վաղարշապատ						33	17.10	980.0	11150.0	2065.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						1	0.40	100.0	4000.0	500.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս								60.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						3	1.81	360.0	5500.0	990.0
Գուգարք								500.0	6000.0	1300.0
Սպիտակ						1	0.45	500.0	3300.0	1045.0
Ստեփանավան						11	15.80	180.0	4000.0	337.0
Տաշիր						3	6.09	100.0	400.0	237.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	6	1.39	215.0	750.0	384.0	34	15.54	520.0	10100.0	5500.0
Եղվարդ						41	17.23	380.0	6100.0	2480.0
Հրազդան						6	2.42	250.0	4000.0	770.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						13	9.94	550.0	760.0	680.0
Ամասիա								80.0	525.0	190.0
Անի								240.0	800.0	293.0

Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ								140.0	800.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	858.0
Սիսիան						4	3.73	90.0	1500.0	286.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	1.04	260.0	4000.0	1260.0
Վայք						3	0.87	120.0	3400.0	520.0
Տավուշի մարզ										
Բերդ						8	5.10	100.0	2000.0	460.0
Իջևան								530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան						1	0.16	100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. հոկտեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 166 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 12, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						17	19660.0	120.0	3800.0	2230.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ						9	8400.0	175.0	2460.0	650.0
Մասիս						20	15380.0	270.0	3680.0	800.0
Վեդի						4	3710.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						1	1000.0	180.0	2440.0	730.0
Բաղրամյան						1	2000.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						15	25620.0	280.0	3700.0	1270.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								180.0	1000.0	520.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի						1	400.0	120.0	320.0	225.0
Սևան								120.0	1000.0	225.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								78.0	440.0	200.0
Գուգարք								78.0	3800.0	630.0



Սպիտակ								78.0	450.0	160.0
Ստեփանավան								78.0	340.0	140.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2030.0	62.0	166.0	114.0	50	42358.0	180.0	4300.0	1440.0
Եղվարդ	10	10000.0	90.0	90.0	90.0	26	25730.0	180.0	3670.0	1740.0
Հրազդան						2	1200.0	180.0	4120.0	1300.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	2460.0	120.0	2500.0	325.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի						2	2512.0	120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ						1	400.0	120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս								78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	400.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						2	1400.0	78.0	1600.0	480.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 11 գործարքներ 22.68 հա մակերեսով, ընդ որում 3-ը Արարատի /0.82 հա/, 2-ը՝ Շիրակի /15.15 հա/ և 6-ը՝ Տավուշի մարզերում:

2003թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 606 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 32.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 28.2%-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ 13.5%-ով:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 50 բնակարանների, 15 բնակելի տների, 163 հասարակական, 26 արտադրական նշանակության օբյեկտների, 349 հողերի եւ 3 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2003թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 46 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. հոկտեմբերի համեմատ, նվազել են 61.0%, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ աճել են 21.1%-ով:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 1977.84 հա ընդհանուր մակերեսով հողեր /3.12 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1908.06 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /597.0 հա նախկինում պահուստային/, 3.67 հա բնակավայրերի, 62.99 հա արդյունաբերական օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 618.12 հա, որից 618.01 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 33.73 հա, Լոռու մարզում, որից 33.44 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 295.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	200.00	34	130.63
Արարատ	0	0.00	34	386.12
Արմավիր	0	0.00	28	618.01
Գեղարքունիք	1	15.00	12	65.25
Լոռի	0	0.00	11	33.44
Կոտայք	0	0.00	27	43.25
Շիրակ	1	80.00	14	133.30
Սյունիք	0	0.00	9	104.60
Վայոց Ձոր	0	0.00	8	54.77
Տավուշ	0	0.00	15	43.70
<b>Ընդամենը</b>	<b>3</b>	<b>295.00</b>	<b>192</b>	<b>1613.06</b>

2003թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 526 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 28.3%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ 50.7%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 31.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /35.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.0%/, առանձնատների /13.9%/ եւ հողերի /27.9%/ նկատմամբ:

2003թ. հոկտեմբերին Երեւան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 229 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. հոկտեմբերի համեմատ, աճել է 17.4%-ով, իսկ 2003թ. սեպտեմբերի համեմատ՝ 5.5%-ով:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 461.84 հա /0.29 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 460.32 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 236.84 հա, որից 235.60 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 14.07 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, Լոռու մարզում:

2003թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական եւ արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 35 եւ 9 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.6 %:

2003թ. սեպտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 41.9%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 45.7%-ով: 2003թ. հոկտեմբերին

մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երեւանում՝ 22.7%:

2003թ. հոկտեմբերին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 1040 գործարքներ, որոնց քանակը 2003թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 3.2%-ով, իսկ 2002թ. հոկտեմբերի համեմատ՝ 54.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երեւանում /45.1%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***